



**MILLENNIUM CHALLENGE
ACCOUNT - ARMENIA**
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Մամյո հաղորդագրություն PRESS RELEASE

3 դեկտեմբերի, 2009

Ստորագրվել է Սպիտակի ինքնահոս համակարգի շինարարության պայմանագիրը

Երևան, Հայաստան- 2009 թ. դեկտեմբերի 3-ին Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ (ՀՄՀ-Հայաստան) ՊՈԱԿ-ը և «Արփա Սևան» ԲԲԸ-ն (Հայաստան) կնքեցին Սպիտակի ինքնահոս համակարգի շինարարության պայմանագիր: Պայմանագիրը կնքվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի և «Արփա Սևան»-ի տնօրեն Պարույր Հակոբյանի կողմից:

Պայմանագրի գինը կազմում է 2, 106, 477.67 ԱՄՆ դոլար, իսկ պայմանագրի ժամկետն է 16 ամիս:

Սպիտակի ինքնահոս համակարգը այն հինգ ինքնահոս համակարգերից մեկն է, որի շինարարությունը ընդգրկվել է ՀՄՀ-Հայաստանի Ոռոգելի գյուղատնտեսության ծրագրի Ենթակառուցվածք ենթածրագրում: Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ֆինանսավորմամբ այս ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվելու է նաև 6 մայր ջրանցքների և 17 պոմպակայանների վերականգնում, ինչպես նաև ավելի քան 70 շահառու համայնքներում ներտնտեսային ցանցի և Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի բարելավում:

Այս իրադարձության և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել

www.mca.am

Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն է, որն հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ ժողովրդավարության և արդարության սկզբունքներով իրականացնելու Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված համաձայնագիրը: